

## «ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ, ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ» (Միջազգային գիտական նստաշրջան համալսարանում՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին)

Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը Երևանի պետական համալսարանում անցկացվեց «Մեծ Հոկտեմբերը, սոցիալիզմը և ազգային հարցի լուծումը» թեմայով հորեյանական միջազգային գիտական նստաշրջան՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին: Այն համատեղ կազմակերպել էին սոցիալիստական երկրների գիտությունների ակադեմիաների բազմակողմանի համագործակցության «Մեծ Հոկտեմբերի և դրան հաջորդած սոցիալիստական հեղափոխությունների պատմություն» պրոբլեմային հանձնաժողովը, Երևանի պետական համալսարանը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմություն» գիտական խորհուրդը և նրա հայկական բաժանմունքը, ՍՍՀՄ ԳԽ ՍՍՀՄ պատմության ինստիտուտը և ՀՍՍՀ ԳԽ պատմության ինստիտուտը:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Մոսկվայի, Անիևգրադի, Կիևի, Քրիլիսիի, Մինսկի և Սովետական Միության այլ քաղաքների նշանավոր գիտնականներ, սոցիալիստական մի շարք երկրների (ՉՍՍՀ, Հունգարիա, Լեհաստան, Բուլղարիա, Մոնղոլիա, Վիետնամ, Կուբա) պատմաբաններ ու ազգային հարցի տեսաբաններ:

Պլենար նիստը ներածական խոսքով բացեց Երևանի համալսարանի ՍՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ, ՀՍՍՀ ԳԽ ակադեմիկոս Մ. Աղայանը: Նա նշեց, որ սովետական բազմազգ ժողովուրդը և ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը, մեր բոլոր բարեկամները պատրաստվում են հանդիսավորությանը Երևանի ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակը: Սովետական Հայաստանի մայրաքաղաքում գումարված այս նստաշրջանը ևս, — ասաց Մ. Աղայանը, — ներկայացնում է այդ պատմական նշանավոր իրադարձության հորեյանին: Քույլ տվե՛ք Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և հանրապետության կառավարության անունից ողջունել ձեզ մեր հայտնի հիմնավոր և հավերժ երիտասարդ հոգում: Ներկա միջազգային նստաշրջանը կոչված է

ՍՄԿԿ XXVI համագումարի պատմական որոշումների լույսի տակ քննարկելու ազգային հարցի լուծման մի շարք հրատապ պրոբլեմներ, որոնք ունեն գիտատեսական և գործնական մեծ նշանակություն ինչպես Սովետական Միության, այնպես էլ սոցիալիստական ու նոր զարգացող երկրների համար:

Երևանի համալսարանի ղեկավարտի, կուսակցական կոմիտեի, հասարակական կազմակերպությունների ու պրոֆեսորադասախոսական կազմի անունից կոնֆերանսի մասնակիցներին ու հյուրերին ողջունելով՝ գիտական աշխատանքների գծով պրոնկտոր Լ. Կարապետյանն ասաց.

— Հարգելի բնակներ՝, հուսով եմ, որ ներկա միջազգային կոնֆերանսը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման մեծ հորեյանին, կանցնի գիտական բարձր մակարդակով: Այն նվիրված է մի այնպիսի պրոբլեմի, որը հրատապ է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Սովետների երկրի ժողովուրդներ իրենց սեփական փորձով համոզվել են, որ մեկ միության մեջ համախորհրդով բազմապատկում է նրանց ուժերը, ապահովում է արագ և բազմակողմանի սոցիալ-տնտեսական ու հոգևոր զարգացում: Դրա լավագույն ապացույցը հայ ժողովրդի բազմակողմանի զարգացումն է, Սովետական Հայաստանի տնտեսական ու սոցիալական, գիտության ու մշակույթի վերելքը, ինչպես նաև մեր մեծ Միության մյուս ժողովուրդների բարգավաճումը: Այդ նվաճումները ձեռք են բերվել միայն մեծ Հոկտեմբերի, սոցիալիզմի և լենինյան ազգային քաղաքականության հետևանքով: Երբ մեծ ժողովրդի, եղբայրական մյուս ժողովուրդների սերտ միասնությամբ ու համագործակցությամբ: Հայ ժողովրդի վերածննդի, նրա տնտեսության ու մշակույթի բուռն ծաղկման ու զարգացման գործում իր ծանակցի աջակցությունն ունի նաև Երևանի պետական համալսարանը, որը Սովետական Հայաստանի հասակակիցն է, ձեռքով ու զարգացել է նրա հետ մեկտեղ: Համալսարանի ֆակուլտետների հիման վրա էլ հե-

տագայում ստեղծվել են մեր հանրապետության բուհերի կեսից ավելին:

Այնուհետև պրոֆ. Լ. Կարապետյանը կոնֆերանսի մասնակիցներին ու հյուրերին ծանոթացրեց Երևանի համալսարանում կատարվող գիտական աշխատանքներին, ձեռք բերված նվաճումներին, զարգացման հեռանկարներին:

Պիեմար հիստում սովետական բազմազգ պետության կառուցման գործում Վ. Ի. Լենինի ներդրած ավանդին նվիրված զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Մ. Կուլինեկոն (Մոսկվա): Ձեկուցողը շեշտեց, որ ՍՍՀՄ կազմավորման գաղափարն աշխարհը տվել է Վ. Ի. Լենինը և հա էլ խոր ու բազմակողմանիորեն ուսումնասիրել ու տեսակաճորեն հիմնավորել է բազմազգ հանրապետության ստեղծման հարցը: Լենինի այն դրույթը, թե՛ «բոլոր Ռուսաստանը լինի ազատ հանրապետությունների միություն», հանդիսացավ ազգային հարցի լուծման ուղղությամբ լենինյան ֆաղափականության ուղեցույցը: Ձեկուցողը հանձնարեց վերաբերել ՍՍՀՄ կազմավորման ժամանակաշրջանը, ցույց տվեց նրա պատմական անհրաժեշտությունը և ընդգծեց այն միտքը, որ ՍՍՀ Միության ստեղծումը Վ. Ի. Լենինի գաղափարների, ազգային ֆաղափականության լենինյան սկզբունքների մարմնացումն է, որը արդարացի է անցած վեց տասնամյակների պատմական փորձով:

ՀՍՍՀ ԳԱ ակադ. Մ. Աղայանը իր «ՍՍՀՄ կազմավորումը և հայ ժողովրդի վերածնունդը» զեկուցման մեջ ցույց տվեց, որ Հակոբեցիության սոցիալիստական ենթափախությունը մեր երկրի բոլոր ժողովուրդներին ինֆորմացիոն զարգացման հնարավորություն ընձեռեց: Լենինյան ազգային ֆաղափականության հարթանակի փայլուն օրինակ է հայ ժողովրդի պատմական հակասացիքը: Սովետական իրիսանությունը հայ ժողովրդին ոչ միայն փրկեց ֆիզիկական բնաջերմից, այլև նրա համար բացեց ազգային վերածննդի լայն հանապարհ, հնարավորություն տվեց զբևոսելու իր ստեղծարար տաղանդը կյանքի բոլոր ոլորտներում: ՍՍՀՄ եղբայրական բնառնիքում Հայաստանը հսկայական հաջողությունների հասավ տնտեսական ու մշակութային շինարարության ասպարեզներում: Ձեկուցողը ընդգծեց, որ ռուս մեծ ժողովրդի, սովետական երկրի բոլոր ժողովուրդների հետ եղբայրական բարեկամությունը բարոյաբանական և սոցիալական անգին սեփականություն է. երաշխիքն ապագա բոլոր հարթանակների՝ կոմունիստական հասարակարգի կառուցման նախապահին:

«Մեծ Հակոբեցիքը և սովետական բազմազգ պետության ստեղծումը ժամանակակից պատմագրության մեջ» զեկուցումով պրոֆ. Ե. Գորոդեցիին (Մոսկվա) ապացուցեց, որ սովետական պատմաբանները մեծ հաջողությունների են հասել ազգային հարցի պատմության պատմագր-

ության ստեղծման, ինչպես նաև ազգային-պետական ու ազգային-կուլտուրական շինարարության ուսումնասիրության ասպարեզում:

Սովետական Միության կազմավորման պատմության, ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման բուրժուական պատմագրության քննադատության եր նվիրված պրոֆ. Վ. Սալովի (Մոսկվա) զեկուցումը: Հեղինակը ցույց տվեց, որ ազգային հարցը դեռևս մնում է ժամանակակից գաղափարական պայքարի ամենասուր պարբերականներից մեկը: Կոմունիստական կուսակցության և սովետական պետության գործունեության ռ. Վի ոլորտ թերևս այնքան կապիտալ ենթակառուցված չի ենթարկվում, որքան ազգային ֆաղափականությունը: Բուրժուական գաղափարախոսները ամեն կերպ աշխատում են սեպ խրելու և մեր երկրի մյուս ժողովուրդներին միջև, կանխագուշակում են ազգային մշակույթների ու լեզուների շուտափույթ վերացում, կեղծում են մեր երկրում տեղի ունեցող ազգային պրոցեսների էությունը:

Պիեմար հիստից հետո կոնֆերանսը երեք օր իր աշխատանքները շարունակեց երկու բաժանմունքներով: Առաջին բաժանմունքում քննարկվեցին «Հակոբեցիքը և ազգային հարցը» թեմայի հետ առնչվող բազմաթիվ պարբերներ: Կարգավեցին 14 զեկուցումներ Մոսկվայի, Կիևի, Մինսկի, Քրիլիսի, Երևանի, Ռեզայի, Բաֆի, Աշխաբադի և Վիեննայի գիտնականների կողմից: Ձեկուցումների մի զգալի մասը նվիրված էր ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման տեսական ու ծրագրային խնդիրներին (Մ. Առաքելյան, Պ. Շաստիտկո, Վ. Եժով, Յ. Աշինով և ուրիշներ), ազգային ու համազգային պարբերներին (Ս. Կուլինեկո, Գ. Մակարով, Ն. Քավալաբա, Յա. Տիտարենկո և ուրիշներ), ինչպես նաև ազգային ու դասակարգային հարցերի փոխհարաբերությանը, լենինյան ազգային ծրագրի գեոսական հիմունքների պարզաբանմանը և ՍՄԿԿ ազգային ֆաղափականության հարցերին սովետական պետության զարգացման տարբեր փուլերում (Ի. Իգնատենկո, Վ. Ուստինով, Վ. Մուրադյան, Ա. Մենտեշաշվիլի, Ի. Ապինե, Ք. Համրով):

Գրեթե բոլոր զեկուցողներն էլ անդրադարձան այն հարցին, թե ինչպես է կուսակցությունը լենինյան ազգային ծրագրի ու ազգային ֆաղափականության իրականացման համար ապախրել հակամարտությանն ու օպորտունիստական, բուրժուական ու մանրբուրժուական հայացքների դեմ: Նրանք ընդգծեցին, որ 1920—30-ական թրվականներին մի շարք ազգային հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական նետամնացության վերացման գործում առանձնապես մեծ էր ռուս ժողովրդի դերը:

Մի քանի զեկուցումներ նվիրված էին սովետական հանրապետություններին միջազգային հա-

րաբերությունների զարգացման հարցերին արդի փուլում, մասնավորապես ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի տակ:

«Ազգային հարցի լուծման սովետական փորձի միջազգային նշանակությունը» թեման էր ֆենարկվում կոնֆերանսի եկրորդ բաժանմունքի նիստերում: Այստեղ կարգազվեցին 14 զեկուցումներ:

Գրոֆ. Ա. Նեյֆելցի և պատմ. դիտ. քեկնածու Լ. Նեբեդիենկո (Մոսկվա) զեկուցումներում ցույց էր տրված, որ ՍՄԿԿ կազմավորումը, բազմազգ սոցիալիստական պետության վաթսուն տարիների գոյության փաստը իր հեղափոխական ազդեցությունն ունի համաշխարհային ազգային-ազատագրական շարժումների վրա: Այդ շարժումները մինչև իրենց որոշակի սահմանները հանդիսանում են միջազգային բանվորական շարժման բաղկացուցիչ մասը: Այս տեսանկյունից էլ նշվեց, որ սովետական պատմաբանները պետք է մեծ ուշադրություն դարձնեն Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքում ու նրա նախօրյակին միաստանի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրությանը, առանձնացնեն դրանց ընդհանուր օրինաչափություններն ու ազգային առանձնահատկությունները: Ցանկություն հայտնվեց հեղափոխական շարժումների մեջ ընդհանուրի և ազգայինի պրոբլեմներին նվիրել նստուկ գիտական նստաշրջան:

Սոցիալիստական երկրների մի շարք գիտնականների՝ Գ. Միչև, Յ. Նիկոլով (Բուլղարիա), Լ. Քյովլագո (Հունգարիա), Ա. Գաբսի, Ռ. Միրոնչուկ (Կուրա), Նացագորո (ՄԺՀ), Յու. Կոթիժեկ (ՉՍՄՀ) զեկուցումներում ցույց տրվեցին ազգային հարցի լուծման ուղիները իրենց երկրներում՝ սովետական փորձի օգտագործմամբ: Այդ երկրներից ամեն մեկի պատմական անցյալը, տեղական առանձնահատկությունները, ազգային հարցի լուծման հրատապության աստիճանի կո-

մունիստական և բանվորական կուսակցությանը ներքին թելադրել են ազգային ֆաղափակեությունյան իրականացման համար ձեռնարկել առանձին միջոցառումներ: Այդ բարդ նաևապարհին եղել են նաև սխալներ ու սայլաբուսումներ:

Սոցիալիստական սիստեմի ծննդյան հետ առաջացել են ազգամիջյան և միջպետական հարաբերություններ՝ հիմնված պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների իրավահավասարության սկզբունքների վրա: Սոցիալիստական ինտեգրացիայի տեսանկյունից այս հարցերը ֆենարկվեցին պրոֆ. Մ. Առուստամյանի զեկուցման մեջ: Իսկ պատմական գիտ. դեկտորներ Լ. Ջակի (Մոսկվա), Կ. Խուզավերդյանի և պրոֆ. Լ. Խուրչուդյանի զեկուցումները նրվիրված էին ՍՄԿԿ ժողովուրդների մշակութային և ազգային-պետական շինարարության հարցերին, ինչպես նաև վեց տասնամյակների ընթացքում նրանց ձեռք բերած նվաճումների միջազգային նշանակությանը:

Ջեկուցումների մեծ մասում ուշադրություն դարձվեց այն նաևգամաբնի վրա, որ ժամանակակից պայմաններում պետք է ուժեղացնել գաղափարական պայքարը բուրժուական կեղծարարների դեմ, այդ պայքարը ազգային հարցում պետք է կրի ակտիվ ու հարձակողական բնույթ, բացահայտի ազգային հարցի լուծման լեներյան ծրագրի ու ֆաղափակեության նշմարտացիությունը, որպեսզի աշխարհի բոլոր երկրներում նիշտ բմբունեն ՍՄԿԿ-ի կազմավորման սկրբունեները:

Գեկտեմբերի 2-ին ամփոփվեցին կարդացված զեկուցումները. բաժանմունքների նախագահներ պրոֆ. պրոֆ. Մ. Կուլիչենկոն, Մ. Առաբեյյանը, Ե. Գորոդեցկին և Կ. Խուզավերդյանը նշեցին զեկուցումների գիտական արժեքն ու հրատապությունը:

Վ. ՄԱՂԱՅԱՆ

## ԳԻՏԱԿԱՆ ՆՍԱՇՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Իրևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների գիտական նստաշրջանի լիագումար նիստը տեղի ունեցավ դեկտեմբերի 4-ին, համալսարանի մեծ հանդիսասրահում: Բացելով նստաշրջանը՝ համալսարանի ռեկտոր, ՀՍՄՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանն ասաց. Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորումը Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո խոշորագույն իրադարձություն էր: Այն մի հոր դարաշրջան նշանավո-

րեց մարդկության զարգացման պատմության մեջ, որը բացառեց ամեն տեսակի ազգային խտրականություն ու շահագործում: Առաջին անգամ ստեղծվեց տարբեր ազգերի ու ազգությունների համերաշխ կամավոր միություն, որը դարձավ խաղաղության ու սոցիալական առաջադիմության դրոշակակիրը ողջ աշխարհում: Եվ այսօր մեր ազատ հանրապետությունների 60-ամյա Միությունը դարձել է զարգացած սոցիալիստական հասարակության առաջավոր ուժը: ՍՄԿԿ-ի կազմավորումը անսահմանափակ նեա-